



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՄԱՐՏԻ 12-ին, ԵՐԵՎԱՆԱԲԹԻ, Լենինական մեկնեց գերազնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, ընկերակցությամբ հոգեշնորհ Տ. Հայրիկ Վարդապետ Ավետիսյանի, հովվական այցելության համար:

Ամսի 17-ին սրբազնը Լենինականում, սուրբ պատարագի ընթացքում, քահանա ձեռնադրեց Ս. Աստվածածին եկեղեցու սարկավագ Կարապետ Քելամյանին:

Սրբազնը քարոզեց Լենինականում, հոգեպես մխիթարելով հավատացյալներին,

Նորդնծա Տ. Կարապետ քահանա Քելամյանը երեց որդին է Լենինականի ծխատեր Տ. Հակոբ ավագ քահանայի, Տ. Կարապետ քահանան ծնվել է 1919 թվականին Մուսալեռան Հաջի-Հարիբլի գյուղում: 1946 թվականին ներգաղթել է Հայրենիք: Մանկությունից սեր է ունեցել գեղարք հոգևոր ասպարեզը: Նա ծառայել է երկար տարիներ Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում և 1957 թվականի փետրվարին ձեռնադրվել էր սարկավագ:

ՄԱՐՏԻ 14-ին, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում ուսանողության համար դասախոսություն կարդաց Ճեմարանի դասախոս պատուի Հայր Տաթևի անունու հոգևոր ասպարեզը: Արթուր Հատիկյանը՝ «Ե՞նչպես պետք է դիմավորել Մեծ պահքը Հոգևոր Ճեմարանում» թեմայով:

ՄԱՐՏԻ 16-ին, ՇԱԲԱԹ, Մայր Տաճարում, երեկոյան ժամերգությունից հետո քարոզեց Ս. Հոփհամյանց վանքի վանահայր հոգեշնորհ Տ. Նահապետ Վարդապետ Մուրադյանը՝ «Զի որդին իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ բնաբանով: Ժամերգության և քարոզին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՄԱՐՏԻ 17-ին, ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻՆ, Մայր Տաճարում սուրբ և անմահ, պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ Վարդապետ Անթարյանը: Փարոզեց հոգեշնորհ Տ. Խորեն Վարդապետ Ելշուշյանը՝ «Եկայք առ իս ամենայն վաստակեալք» բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՄԱՐՏԻ 21-ին, ՀԻՆԳՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում կազմակերպվել էր գրական-գեղարվեստական երեկո, ուսանողական ուժերով:

Հոգևոր Ճեմարանի տեսչության հրավերով և ուսանողության ցանկությամբ, այսօրվա գրական երեկոյին շատ գեղեցիկ և շինարար դասախոսություն կարդաց Վեհափառ Հայրապետը՝ «Աշխատանքի գերը մարդու իմացական, բարոյական և ֆիզիկական դաստիարակության գործում» թեմայով: Դասախոսությունը լսվեց շափազանց մեծ ուշադրությամբ: Երեկոյին ներկա էին ամբողջ միաբանությունը, Ճեմարանի դասախոսական կազմը և վանքի պաշտոնեությունը:

Հոգևոր Ճեմարանի երգչախումբը, երաժշտության դասատու պ. Հրանտ Գևորգյանի ղեկավարությամբ, հաջողությամբ կատարեց մի շարք քառաձախ երգեր՝ «Մեր երգը», «Աշխատանք նավաստին», «Օդն է զով»: Գ դասարանի ուսանող Գրիգոր Նկրույանը դաշնամուրի վրա նվագեց Բեթհովենի Սոնատան, Խնքնագիր գեղեցիկ շարադրություններ կարդացին բարեշնորհ Մարտինը սարկավագ Բեհրուդյանը՝ «Աղոթք և աշխատանք», Բ դասարանի ուսանող Կարապետ Սուրբիասյանը՝ «Մեր աշխատանքի հերոսները» թեմայով: Բ դասարանի ուսանող Տիգրան Ովթուշյանը արտասանեց Վահան Թեքելյանի «Եկեսցե Տեր» բանաստեղծությունը, իսկ Գ դասարանի ուսանող Մարգիս Մարգմյանը՝ «Գամ շինողներ»:



ՄԱՐՏԻ 22-ին, ՈՒՐԱՅԹ, ՃԵմարանի ուսանողությունը, տեսչական և ուսուցչական Կազմի ընկերակցությամբ, հետիոտն զրուսպուլտ կատարեց դեպի Զվարթնոց, տեղում ծանոթանալու համար հայ ճարտարապետության այլ շենադ կոթողի ճարտարապետական առանձնահատկություններին, կառուցվածքների պատմության և կատարված պեղումների արդյունքներին:

Երեկոյան հսկումի պահին, Մայր Տաճարում քարոզեց Հոգեշնորհ Տ. Մուշեղ Վարդպետ Պետիկյանը՝ «Յիշեա զի ընկալարանդէն զրարիս քո ի կեանսն քում և Ղազարուս նոյնպէս զլարշարանսն, արդ, սա սատմիթարի և դու անդր պապակիս բնաբանով:



ՄԱՐՏԻ 23-ին, ՇԱԲԱՅԹ, Կիրակամտի ժամերգությունից հետո, տոնախմբովով սրբերի հիշատակի առնչությամբ, քարոզեց Հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղաղ Թաջիրյանը, բնաբան ունենալով «Ճանաչել զիմաստութիւն և դիմատ, իմանալ զրանս հանճարոյ», Հայր սուրբ ցուց տվեց Հովհան Օձնեցի, Հովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի հայրապետների կյանքն ու գործունեությունը և մաղթեց, որ «Ճողկւոր Ճեմարանի ուսանողությունը և երետասարդ միաբան եղալը ները գիտակցությունն ունենան իրենց պարտավորությունների և պարտականությունների՝ հանդեպ Մայր Աթոռի, Մայր Հողի և մայր ժողովրդի ու հարազատ պետության, ծառայելու այնպես, ինչպես ծառայել են Օձնեցիներ, Որոտնեցիներ և Տաթևացիներ, անձնուրացությամբ, զրկանքներով, քարոզելով հայ հավատացյալներին՝ ճանաչել զիմաստութիւն և զիրատ, իմանալ զրանս հանճարոյ»:

Ժամերգության և քարոզին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՄԱՐՏԻ 24-ին, ՏՆՏԵՍԻ ԿիրԱԿԻՆ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց Հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդպապետ Ավետիսյանը, Տնտեսի առաջի մասին քարոզեց Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդպապետ՝ «Ճուր զհամար տնտեսության քու բնաբանով,

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՄԱՐՏԻ 29-ին, ՈՒՐԱՅԹ, Երեկոյան, ժամը 4-ին Հովհոր Ճեմարանում տեղի ունեցավ

Հերթական երրորդ դասախոսությունը: Ճայ Եկեղեցու մղած հակաքաղկեդոնական պայքարը ազգային քաղաքական պայքարի տեսանկյունից թեմայով դասախոսություն կարդաց արժանապատիկ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանը,

Երեկոյան հսկումի պահին, Մայր Տաճարում քարոզեց Հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդպապետ Ավետիսյանը՝ «Եկայր առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք բնաբանով:



ՄԱՐՏԻ 31-ին, ԴԱՏԱՎՈՐԻ ԿիրԱԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց Հոգեշնորհ Տ. Մուշեղ Վարդպապետ Պետիկյանը՝ «Յիշեա զի ընկալարանդէն զրարիս քում և Ղազարուս նոյնպէս զլարշարանսն, արդ, սա սատմիթարի և դու անդր պապակիս բնաբանով:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ԱՊՐԻԼԻ 4-ին, ՀԻՆԿԱԲԹԻ, Երեկոյան ժամը 4-ին Ճեմարանում կազմակերպվել էր գրական գեղարվեստական երեկո: Եղան արտասանություն, երգ, նվագ, Բարեհնորհ Տ. Խորեն սարկավագը կարդաց ինքնապիր մի շարադրություն «Մեր շարականները» թեմայով, իսկ թասարանի ուսանող Տիգրան Ութուզյանը՝ «Մեր եկեղեցական մատենագիրները թեմայի շուրջ: Գ դասարանի ուսանող Հակոբ Ճենեպյանը և թասարանի ուսանող Ռաֆիկ Մկրտչյանը գրաբար հատվածներ կարդացին, առաջինը՝ նարեկացուց և երկրորդը՝ Եղնիկ Կողբացուց:

Գրական երեկոյին բանախոսեց դասախոս պ. Արթուր Հատիտյանը, «Մեր եկեղեցական մատենագիրները և եկեղեցական գրական ժանրերը» թեմայի շուրջ:



ԱՊՐԻԼԻ 6-ին, ՇԱԲԱՅԹ «Տօն Մըրոյն Գրիգորի կողմէ կոսաւորչին մերոյ սոսկալի շարշարանցն և մտին ի միջապնա» Այսօր փակ է Ճեմարանը: Մայր Տաճարում պաշտվում է սուրբ պատարագ: Պատարագին է Աղորեջանի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Տիգրայր վարդպապետ Մարտիրոսյանը, որը թեմական գործերով ժամանեց է Մայր Աթոռու Օրվա տոնի և մեծ սրբի մասին քարոզեց արժանապատիկ Տ. Ռուբեն քահանա Մարտիրոսյանը՝ «Մեր հայրն մեր, մի միակըն Ազգն Հայոց բնաբանով»:

ԱՊՐԻԼ 7-ԻՆ, ԳԱԼՈՍՑԱՆ ԿԻՐԱՎԿԻՆ, Մայր Տաճարում պատարագեց գերազնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը և կուսակրոն քահանա ձեռնադրեց բարեշնորհ Գարեգին սարկավագին, վերանվանելով նրան Տ. Պղղոս քահանա, Երեկոյան ժամերգությունից հետո Տ. Սահակ արքեպիսկոպոսը կատարեց վեղարի տվությունը:

Նույն օրը Մ. Էջմիածնի քաղաքամիջի Մ. Աստվածածին եկեղեցում, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, առաջին անգամ լինելով քարոզեց բարեշնորհ Սարգիս սարկավագ Բեհրուզյանը՝ «Եւ լուսուր զայս ի ծագաց մինչև ի ծագս երկրի, զի Աստուած ընդ մեզ է» բնաբանով:

Այսուհետև Վեհափառ Հայրապետի հրամանով հերթով կբարողեն նաև Մայր Աթոռի մյուս սարկավագ միաբանները:

ԱՊՐԻԼԻ 8-ԻՆ, ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, Երեկոյան ժամը 4-ին Հոգմոր Ծեմարանում բանախուսեց Աղքարեշնանի թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը՝ «Բաքվի թեմն այսօր թիմայով: Ծնորհացի վարդապետը հանգամմանորեն ծանրացավ Բաքվի հայ թեմի ազգային, եկեղեցական և մշակութային կյանքի վրա, իր խանդավառ տապալորությունները պատմեց Բաքվից և հայ համայնքից, և սրտագին կոչ ուղեց ուսանողության՝ աննահանչ սիրով նվիրվել հայ ժողովորի Հոգմոր ծառայության մեջ և պատասխանատու գործին:

ԱՊՐԻԼԻ 9-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Վրաստանի թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը, թեմական վարչական գործերով: Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել Տ. Վահան վարդապետին և գրուց ունեցավ նրա հետ թեմի գործերի կապակցությամբ:

Նույն օրը իր թեմը մեկնեց Աղքարեշնան առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանը, որն ամսի 5-ին եկել էր Մայր Աթոռու թեմական գործերով: Տ. Տիրայր վարդապետը ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից:

ԱՊՐԻԼԻ 10-ԻՆ, ԶՈՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, ինքնաթիւով Ռումինիա մեկնեց Մայր Աթոռ միաբան Հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը՝ զատկական տոներին

նախագահելու եկեղեցական արարողություններին և բանին կենաց քարոզությամբ միաբարելու Ռումինիայի հայ հավատացյալ ժողովրդին:

Տ. Հայրիկ վարդապետին Երևանի օդանավակայանում ճանապարհեցին Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը, բարեշնորհ Հովհաննես սարկավագ Դանիելյանը և Խորեն սարկավագ Պալյանը:

ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Երեկոյան ժամը 4-ին Հոգմոր Ծեմարանում բանախուսեց Ճեմարանի հայոց լեզվի և գրականության գասատու պ. Պարգև Շահրազյանը՝ «Քեղարվեստական գրականության դերը դաստիարակության գործում» թեմայով:

ԱՊՐԻԼԻ 12-ԻՆ, ՈՒԹԲԱԹԻ, առավոտյան հանդիսավոր վերջին Երևագալի ժամերգությանից հետո, գարնանային օդով, Ճեմարանի ուսանողությունը, տեսչական և գասատուսական կազմը հետիւոտն ուստի գնացին Օշական, Մ. Մեսրոպի շիրմի առաջ խոնարհելու և նրա «աղվոր» Ա. Թ-են դաս մը» խնդրելու:

Նույն օրը Երեկոյան ժամը 8-ին Վեհարանում միաբանության համար բանախուսություն կարդաց Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Վագգեն Ա.-ի ուղերությունը» գրքի հրատարակության կապակցությամբ՝ կիրանանի հայ գաղութի ազգային, եկեղեցական, մշակութային կյանքի վերաբերյալ:

ԱՊՐԻԼԻ 14-ԻՆ, ԿիրԱԿԻ, ԾԱՂԿԱՁԱՐԴ. Մայր Աթոռում Մաղկաղարդի օրվա արարողությունները կատարվեցին ավանդական հանդիսավորմաբ: Մաղկաղարդի օրվա առթիվ Մ. Էջմիածին էին եկել բազմաթիվ ուստավորներ և հավատացյալներ Երևանից, շըրշաններից, Բաքվից, Թիֆլիսից և այլ վարերից: Մայր Տաճարը, շրջափակը լեցուն էր ժողովրդական բազմությամբ: Մայր Տաճարը զարդարված էր ուռենու թարմ ճյուղերով: Միաբանությունը, տանականորեն զգեստավորված, մասնակցում էր արորադություններին: Մայր Տաճարի կամարների տակ ուրախ և զվարթագին հնչում էին Մաղկաղարդի Հոգեշներից,

Տաճարում պաշտվում է հանդիսավոր սուլթանական պատարագ:

Ժամը 11-ին Վեհարանից եկեղեցական թափորով, զանգերի զվարթ զողանքի տակ:

Մայր Տաճար է իշնում Վեհափառ Հայրապետում

«Հայր մերծ-ից առաջ քարոզում է պատարագիլ Սահակ արքապիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը, նկարագրելով Քրիստոսի հանդիսավոր մուտքը Երուսաղեմ։ Սուրբ պատարագի ավարտին եկեղեցական թափորով Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Վեհարան, օրհնելով հանդիսավոր շքերթի երկայնքն ի վար խուսներամ հավաքված բազմությանը, որը գլուխ է խոնարհում հայրապետական օրհնության առաջ, ձեռքներում ուղենու թարմ ճյուղեր։

Երեկոյան ժամը 5-ին, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Մայր Տաճարում կատարվում է «Դոնքացէք»-ի խորհրդավոր արարողությունը, հավատացյալ ժողովրդի խուսն բազմության ներկայության։ Իցման Ս. Սեղանի առաջ ծնկաշոր, շուրջը Մայր Աթոռի ողջ միաբանությունը հավաքած, Վեհափառ Հայրապետը աղեկրածայն երգում է, որ բացին աստվածային ողորմության և չորրհաց գուները հայ ժողովրդի առաջ, «Ճողորմութեան քո զորուն բաց մեզ, Տէ՛ ո՞ շարականի հնչումների տակ բացվում են Մայր Տաճարի վարագույններ։



ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ, ԱՎԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, երեկոյան ժամը 8-ին Վեհարանում բանախոսեց է Հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը՝ Վեհափառ Հայրապետի այցելությունը եղիպատու և եղիպատուի հայ դպութը այսօր թեմայով։



ԱՊՐԻԼԻ 16-ԻՆ, ԱՎԱԳ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Վեհափառ Հայրապետի հրամանով թաքու մեկնեցին բարեշնորհ Հովհաննես Դանիելյան և նորեն Պալյան սարկավաճները՝ Ավագ շաբաթվա և Ս. Զատկվա եկեղեցական տոնախմբություններին մասնակցելու համար։



ԱՊՐԻԼԻ 17-ԻՆ, ԱՎԱԳ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Վեհափառի կարգադրությամբ Թիվիսի մեկնեց Հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը, ընկերակցությամբ բարեկնորհ Սարգիս սարկավագ Բեհրուդյանի և Կարապետ սարկավագ Բենլիյանի, մասնակցելու համար Թիվիսիում զատկական եկեղեցական հանդիսություններին։

Այսօր փակվեց Հոգեմոր Ճեմարանը Զատկի արձակուրդների առթիվ, Ուսանողությունը Զատկի տուներից հետո ապրիլի 22-ին կմեկնի տուն արձակուրդով մինչև մայիսի 3-ը։

ԱՊՐԻԼԻ 18-ԻՆ, ԱՎԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Ճիշտակ» ԸՆԹՐԵԱՑ ՏԵԱԹՐ ՄԵՐՈՅ ՑԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ»։

Առավոտյան ժամերգությունից հետո Մայր Տաճարում մատուցվում է հանդիսավոր սովոր պատարագ։ Պատարագում է Վրաստանի թեմի առաջնորդ և Գերագույն Հոգեմոր Խոր-ը ըրդի անդամ գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Տեր-Սահակյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի հաղորդվում է հավատացյաների մի մեծ բազմություն։ Հաղորդվում է նաև Հոգեմոր Ճեմարանի ուսանողությունը։

Երեկոյան ժամը 5-ին, նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, Ավագ Սեղանի վրա կատարվում է Ուսնավայրի հանդիսավոր կարգը։ Վեհափառ Հայրապետը, ղենջակ կապած, սեղանի առաջ ծնրադիր, քրիստոսանման խոնարհությամբ, մեկ առ մեկ լվանում է Մայր Աթոռի միաբաններից և Ճեմարանի ուսանողներից 12-ի ոտքերը և օծում օրհնված յուղով։ Ուսնավայրի արարողությունից հետո երկյուղած բարեպաշտությամբ հայ հավատացյալը տուն է տանում Տաճարում օրհնված յուղից մի կտոր, նրա մեջ խոտացած տեսնելով իր հավատը, իր բարեպաշտությունը, այն երջանիկ և անսուս հավատով, որ երբեք չի պակասի իր հոգու մաքուր ձեթը։

Գիշերվա ժամը 8-ին հսկումն է։ Մայր Տաճարում սևով են ծածկվել սեղաններն ու գրակալները։ Ավագ Սեղանի վրա առկայում է տանուերկու կերոն։ Մատնության ահավոր գիշերն է...։ Ակսվում է ժամերգությունը սաղմոսերգությամբ։ Լսվում են երգովող տիսուր շարականների և կարդացված ավետարանական ընթերցումների միջից Քրիստոսի մատնության մանրամասնությունները։ Մինչ մի առ մի հանգում են սեղանի մոմերը։

Մինչև ուշ գիշեր Տաճարը լիքն է չերմեռանդ հավատացյաների բազմությամբ։ Հըսկումին քարոզում է գերաշնորհ Տ. Սահակ արքապիսկոպոսը։

Հսկումին ներկա էր Վեհափառ Հայրապետը, որը և կարդաց մատնության առաջին ավետարանը։

ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ, ԱՎԱԳ ՈՒՐԲԱԹ, «ՅԻՇԱ-
ՏԱԿ ԶԱՐՉԱՐԱՆԱՑ ԵՒ ԽԱԶԵԼՈՒԹԵԱՆ
ՏԵԱՌՈՒՄ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒԽԻ ՔՐԻՍՏՈՍԻ»:

Մայր Տաճարում կատարվում է Հիսուսի մատնության, շարշարանքի և խաչելության կարգը, մասնակցությամբ ամբողջ ժիարանության և ուսանողության:

Երեկոյան ժամը 5-ին Վեհափառ Հայրապետը Մայր Տաճարում նախագահում է Ավագ ուրբաթի Քրիստոսի թաղման կարգի կատարման հանդիսության: Տաճարը լիքն է աղոթողներով: Իշման Ս. Սեղանի առաջ, սպիտակ դաստառակով ծածկված սեղանի վրա դրված են Քրիստոսի թաղումը ներկայացնող սրբազն իրեր: Հնչում են լալագին ու տիխուր թաղման երգերն ու մելամաղձիկ շարականները, մանավանդ՝ «Պարգևատուն ամենեցուն»-ը. որի բառերը դրված Ս. Սահակ Պարթևից և եղանակը համակ վիշտ են արտահայտում: Եկեղեցին սպոմ է Աստվածորդու խաչելությունն ու թաղումը:

ԱՊՐԻԼԻ 20-ԻՆ, ԱՎԱԳ ՇԱԲԱԹ, «ՃՐԱԳԱ-
ԼՈՑՑ ԶԱՏԿԻ»:

Հարության ճրագալուցի երեկոն է: Տաճարը լիքն է հավատացյաներով: Ժամը 5-ին, հանդիսավոր եկեղեցական թափորով, Մայր Տաճար է իջնուած Վեհափառ Հայրապետը: Սկսվում է երեկոյան ժամերգությունը: Ճեմարանի ուսանողների կողմէց Դանիելի գրի հանդիսավոր ընթերցումից հետո բացվում է Ավագ Սեղանի վարագույրը: Ճրագալուցիցի երեկոյան հանդիսավոր ժամն է, Պատարագում է Սահակ արքավիսկոպոսը: Պատարագի ընթացքում, վեհ ու հանդիսավոր, հնչում է Քրիստոսի հրաշափառ հարության հիմնը՝ «Գովկեա», երուսաղէմ, զՏէր, յարեաւ Թիստոսի մեռելոց»:

Փա՛ռք Տիրոց հրաշափառ հարության:

Վեհափառ Հայրապետը նախագահում է Ջատկի նախատոնակի հանդիսության: Հաղորդվում են շատերը: Արձակվում է սովոր պատարագը: Բազմությունը, Քրիստոսի հարության լուսով պայծառացած, հորդում է եկեղեցուց դուռ և հարության լույսերն ու ավետիսը տանում դեպի հայ երդիքները.

«ԾՆՈՐՉԱՎՈՐ ԶԱՏԻԿ, ՔՐԻՍՏՈՍ ՀԱՐՑԱՎ Ի ՄԵՌԵԼՈՑ»:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՐՏԻ 24-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռ այցելեց Պեկինի Գեղարվեստների ակադեմիայի պրոֆ. վարիչ Դում Սի-լենը, որը Մայր Տաճարը և եկեղեցական հնագիտական թանգարանը այցելելուց հետո իր տպավորությունները գրեց թանգարանի հուշամատրանում. «Էջմիածնի Տաճարը համադրումն է քրիստոնեական հավատի և խելացի ժողովրդի բազմադարյան պատմության»:

ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Մայր Աթոռ այցելեց Ֆինլանդիայի կուլտուրայի գործիչների պատվիրակությունը, որի կազմումն էին Ֆինլանդիայի սեյմի դեպուտատներ պ. Գեստա Խոզենրեգը (պատվիրակության փեկավար) և էլլի նարմինենը: Հյուրերը եղան Մայր Տաճարում, եկեղեցա-հնագիտական թանգարանում և մեկնեցին լավագույն տպավորություններով:

